

# ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՌԸ

(Հայունակութիւն, առև թիւ 6.)

“Յայտնուեցաւ ուրեմն Տեարք իմ, | ատինաց արարքը, ըսաւ Արբազան Պատրիարքը, և տեսաք ահա անոնց շարժմունքները, իմացաք անոնց խօսած խորամանկ խօսքերուն յարդը. որոշեցէք ուրեմն և գարձուցէք իրաւունքը իւր սեփիհական տիրոջը, եւ պատուիրեցէք զգկողին որ մէկ մ’ալ չանդգնի այսպիսի յափշտակութիւն ներ ընելու. ”

Յաւելուց ասել Արբազան Պատրիարքն, թէ “Ղիտէմ Տեարք իմ, գարձեալ Արանջիսկեանք չպիտի պիշանին իրենց յայտնի անիրաւութիւնը ճանաչելու, և պիտի պնդեն, թէ այն տեղը ճանապարհ է, և չպիտի զիջանին իրենց անիրաւութեամբ շնորհ դուռները գոցելու, եւ իրենց կից ճանապարհի կողմը գարձնելու. բայց և այնպէս Տեարք իմ, գարձեալ պիտի պատասխանեմ իրենց, Տէրութեօրէնքին համեմատ, ուրեմն կը խընդրեմ Տէրութեան կանոնին համեմատ. և գատաստանական օրինաց համաձայն պատասխան տուեք ինձ դուք Տեարք իմ, և Պ. Հիւպատոսն եւս ըստ իւրեանց Տէրութեան օրինաց պատասխանեցի ինձ ճշմարիտն, որպէս կը պահանջէ արդարութիւնն ո ըսելով սկսաւ այսպէս :

“Ղախ” Արանջիսկեանց ըսած և պնդած խօսքերնուն համեմատ դործին հակառակ կողմը բռնենք, և ըսենք թէ նոյն իսկ իրենց ըսած տեղը ճանապարհ եղած ըլլայ կամ ճանապարհ է, նա եւ իրենց անիրաւութիւնը աւելի գատասպարտելի ընելու համար բոլոր աշխարհի առջեւ, զիցուք թէ նոյն տեղը թագաւորական

ճանապարհ Եարիւթելում է. բայց և այնպէս Արանջիսկեանք դատը երեկը չեն կրնար վաստիկիլ. վասն զի իրենց թողած գուներուն և ըսած ճանապարհին մէջ տեղի գտնուած հողը թէ և մէկ թիզը ըլլայ, իմ ազգային սեպհականութիւնս է, ըստ օրինաց իրաւունք չունիմ ըսելու թէ իմ գետնիս վրայէն մի անցնիք, իմ սեպհականութեանս վրայ մի կոխեր, երեկը հրաման չունիմ. ինչ կըսէ գատաստանը, արդեօք կը թոյլատրէ այդպիսեաց :

“Ղրկրորդ՝ քանի որ նոյն դրան առջեւը եղած գետինն իմ սեպհականութիւնս է, քանի որ լատինաց գերեզմանատան հիւսիսակողմն հասարակաց պողոտայ կայ, այսինքն Եարիւթեամ, իրենց ճանապարհ տալու պարտաւորութեանէ աղաստ եմ ըստ Տէրութեան օրինաց. ուրեմն և ես անոր քաշած պատին ճիշտ առջեւէն իմ գերեզմանատանս պատը երբ կողեմ, կրնամ քաշել Տէրութեան օրինաց համեմատ մէկ ձեռք սղմելու չափ անոնց և մեր պատին մէջ միջոց ձգելով ոլ կրնայ զիս արդելուլ քանի որ իմ ըրածս լատինաց ըրածին պէս օրինաց և արդարութեան դէմչէ : ”

Ճամարէ թէ միաբերան պատասխանեցին Վրցին Վ սեմութիւնը, թէ Քանի որ հողին տէրը արտօնութիւն չուար իւր հողին վրայէն անցնիլ, գըրան տէրը իր դռնէն դուրս չկրնար ոտք կոխել. բայց եթէ ուրիշ կողմանէ դուռ բանալու դիւրութիւն չունենայ, այն ատեն իրաւամբ կրնայ պահանջել նոյն հողին տիրոջմէն իրեն ճանապարհի համար ըստ բաւականին գետին, և այն ոչ թէ բռնութեամբ, այլ համոզելով և իցէ կերպիւ, և նոյն հողին տէրն ալ պարտաւորէ ամենայն սիրով հնագանդիլ և շնորհել. բայց եթէ լատինք քամիւնին հասարակաց

պողոտայ ունին, ինչպէս որ դուք կը սէք և կը պնդէք, երբէք չեն կը նար իրաւունք ունենալ. դուք ձեր սէպէ հական հօղին վրայ կը նաք ձեր պատը քաշել երբ որ ուղէք մէկ ձեռք սրդ մելու չափ միջոց ձգելալ. Տէրութե օրինաց համեմատ | ատինք ձեզմէն ուղած գետինը ուրիշ կերպով չեն կրնար ստանալ, եթէ ոչ փոխարինելով կամ ծախու առնելով | և այն ձեր ամենայն յօժարութեամբը նուէր ընելու միջոց գտնելով. —

“ Ուրեմն, ըսաւ Արքազան Պատրիարքը, այս որ աստիճան անիրաւութիւնէ Ֆրանչիսկեանց մեզ ըրածները, և որ աստիճան անհասկանալի է մեր Շարեինամ Խայսեր հպատակասէր բարի կամացը հակառակ Տէրութեան պաշտօնէից կողմանէ ցցց որը ուած թոյլատրութիւնն որ Հայոց ազգին արդար սեպհականութեան իրաւունքները այսպէս իւր աչքին դիմացը ունակոխ եղած է և կը լսոյ. և արդեօք դեռ պիտի շսրունակու՞ր, ոյր վան շուարեալ մնացեր եմթէ, եթէ դարձեալ պատահի, որ ազգի, և որ տէրութեան օրինաց կամ դատաստանի դիմեմ: | և դուք Պ|. Հիւ պատոս արդեօք սեսամծ էք այսպէս արդար և սեպհական իրաւանց չարաչար բըռնաբարուիլը. արդեօք ձեր Տէրութե կանոնները կը ներե՞ն, կամ ձեր Տէրութեան մէջ օտար Տէրութեան հը պատակներ այսպէս յափշտակութիւններ կը նան ընել. և ընելու ալ ըլլան, արդեօք կարելի է թոյլատրէք, կ'աղաշեմ պատմեցէք՝ եթէ ունիք այսպէս անօրինակ անիրաւութե նմանը:

“ Այս միջոցին Վ սէմ. Վ ալի փաշայն գործին բացատրութիւնն ուրիշ եղանակի դարձնել ուղելով ըսաւ. “ Փաթրիք տօստում, այս | ատինաց պատը չքաշուած, անոր տեղը Բ'նչ

կար, և այս գործին սկիզբը Բ'նչպէս սկսուեցաւ, որ այսպան գժատութեան պատճառ տուած է, եթէ կարելի է, մեղ պատմէ: :

“ Ուրեմն գործը նորէն պիտի ըսկըսինք, ըսաւ | . Պատրիարքը, վեաս շւնի, դարձեալ Չեր Վ սէմութե գըլլուխը պիտի ցաւիրաց քանի որ դուք այդ ձանձրութիւնը յանձն կ'առնուք տանիլ, ինձ ուրիշ բան չմնար, միայն սիրով յանձն առնուլ պատմել: | Սեմափայլ Տէարք, ըսաւ, նոյն պատին տեղը արդէն մէկ կանգուն հաստութեամբ հողին երեսին հաւասար պատմի կար կիսովի քաշուած, կիսովի կ'ըսեմ, այսինքն՝ կէսը մեր և կէսը | ատինաց, այսինքն՝ մեր կողմին երեսը մեզ կը վերաբերէր, իրենց կողմի երեսը՝ իրենց. և նոյն պատը որ յատակին գրեթէ հաւասար էր, իսկ մէջ տեղը տեղ կէս կանգունի չափ բարձրութեամբ տնկուած քարեր կային, որոնք յայտնի նշան մի կրնային սեպուիլ նոյն պատին կիսովի ըլլալուն, այսինքն՝ Հայոց և | ատինաց ծախումն շինուած ըլլալուն: | Եցն տնկուած քարերը ուրանալը և խորտակելով անցայտ ընելը այնքան դիւրին ըլլալը գիտնալով | ատինք, սկսանի սկզբան ամենայն կերպիւ սիրով և ամենայն խօնաբհութեամբ վարուիլ որ երբէք չէր կարծուեր, թէ այս աստիճան համակրութիւն ցուցընող միաբանութենէ մը այսպէս խորամանկ խարդախութիւնուրս գայ, ոյր վասն մենք և Ծայնք այսպէս վատահացեալ մնացինք. և կը յուսայինք որ գոնէ այս անգամ խաղաղութեամբ գործ մը գլուխ պիտի հանեմք. վասն զի | ատինք կ'ըսէին թէ մենք երեք եղարք ենք, և գերեզմաններն ալ քանի որ միատեղ են, և միայն սահմանաքարերով որոշուած, իւրաքանչիւր

ազդ իւր գերեզմանատան պատը իւրեանց որոշեալ սահմանին համեմատ թող շնէ , լմնայ երթայ : Այսպէս խորամանկ խաբէութեամբ զմեղ և զջյնս երբ պաշարեցին , և այն առափեան վատահացուցին որ համարէ թէ իւրաքանչիւր ազդ սեպհական տեղին պատը շնիւր պիտի սկսէին : Երբ տեսան որ գործադրութիւնը մօտ է , սկսան գործին բոլորովին ուրիշ կերպարանք մի տալ , և աւելի վատահացընելու համար ըսին՝ Հատ լաւ , իւրաքանչիւր ազդ իւր պատը թողշնէ , բայց դռները բնչպէս պիտի ընեմք , և որ կողմէն պիտի ձգեմք , ըլլայ որ ասոր համար ալ մէշերնիս գժտութիւն մի պատահի , վասն զի իրենց նպատակին համեմատ իրենց գերեզմանատան դրան վրայ կասկած ունին եղեր , ՚ի հարկէ վերսիշեալ եղանակաւ գործը կատարուելու որ ըլլար , հիմակուան ըրած անիրաւութիւնները չպիտի կրնային ընել , եւ պիտի ստիպուեին իրենց դուռը իրենց կից եղած արքունի ճանապարհին կողմէն ձգել , որ և ոչ մէկուն իրաւանց կը դպչէր : Այր վասն գարձեալ խօսքերնին փոխելով ըսին . Վելի լաւ ըլլար որ երեք գերեզմանատան մէկ պատքաշեմք , և երկու դուռ ձգեմք , գարձեալ ըստ առաջնոյն անցուգարձ կ'ունենամք իրարուգերեզմանատան մէշն , առանց զիրար ցաւցընելու : —

“ Վ. Երբ այս խորհուրդն եւս արդիւնաւորելու վրայ եր , և ըստ այնմ ընելու սկսելու մօտ , դարձեալ խնդիրը փոխելով ըսին , շատ լաւ , բայց այն դռներուն բանալիներն որ ազդին քովը պիտի մնան , եւ ասոր պատճառաւ ըլլայ որ մեր մէջը դարձեալ անհամաձայնութիւններ ծագի և խուլութեան փոխուի , ՚ի հարկէ

ունինդիրք կ'ըսեն այս ինչ զարմանալի խաղաղափական հոգի ունեցող կրթուաւորներ են , երկնային հրեշտակիք են ինչ են , որ երբէք խուլութեան առիթ անգամ տալէն կը փախչին և կը հեռանան :

“ Ուրեմն կարելի չէ արդեօք նոյն դռներուն քով մէկ մէկ սենեակ շինուի երեք ազդաց ծախիւքը . պահապաններ դրուելով բանալիները անոնց յահճնուի , և որ ազդին որ պէտք ըլլայ և երթայ հօն , պատրաստ գտնայ . այս եղանակաւ ահա երեք ազդաց գերեզմանատուններն ալ նուիս անառնոց արածելու տեղ ըլլալէ ՚ի զատ հասարակութեան ունակոխ ըլլալէն ալ կ'աղատի , և մենք ալ ՚ի զուր տեղ իրարու սիրտ չենք վիրաւորեր : Այն առաջարկութեան մէջ վնասը միայն չայոց ազդին պիտի ըլլար . վասն զիթէ երկու դրան տեղերը եւ թէ դռնապանաց համար շնուրելիք սենեակներուն տեղը չայոց ազդին գերեզմանատընէն պիտի առնուեր եւ միշտ ալ չայոց ազդին գերեզմանատունն երկու ազդաց ստից տակ պիտի մնայր յաւիտեան : Այր վասն ՚ի հարկէ այս խօրհուրդը մենք պիտի հելքէինք և հերքեցինք իսկ . և միան գամայն մենք՝ ալ մեր կարծիքը յայտնեցինք , որ և ոչ մէկին սեպհականութեան չդպչէլէ ՚ի զատ , շատ ալպարզէր և գիւրին , այսինքն՝ չայոց և Յունաց գերեզմանատան մէջ տեղէն ճառնապարհ մը բանալ երեք կանգուն լայնութեամբ . որով ամենայն դիւրութեամբ և խաղաղութեամբ չայոց և Յունաց գերեզմանատան մէջ ապիտի որոշուեին . նոյն ճառնապարհը ըսինք եթէ ուղեմք , բայց կը թողումք հասարակաց երթեւեկութեան համար . և եթէ ուղեմք , երկու գլուխը երկու դուռ զնե .

լով կը փակենք : Հայոց և Յօւնաց քով մէկ մէկ բանալի կը գտնուին , երբ պէտք ըլլայ , իրենց բանալիով կը բանան կը գոցեն երկու ազգն ալ . այս երկու եղանակն ալ կարելի է և շատ ալ դիւրին՝ մանապէս ալ Հայոց և լատինաց գերեզմանատանց մէջ տեղը եղած պատն ալ երկու տղթաց ծախիւք և գիտութեամբ կը շնուի . ինչպէս արդէն նոյն պատին մէջ արնեկուած քարերն ալ կը յայտնէին թէ նոյն իսկ շնուրած ժամանակն ալ այդպէս եղած է . և լատինք իրենց դուռը իրենց արեւմտեան կողմը կից եղած թագաւորական պողոսացին կողմէն կը բանան , այսպէսով երեք ազգաց գերեզմանատունները ամենայն գիւրութեամբ իրենց պատերով որոշուած և առանձին առանձին կը լուսակի մնացած կ'ըլլար , և այսօր ալ այս որտամաշ դատին պատճառ ըլլալու առիթներ երեւան չէր ելլար :

“ Այս մեր օրինաւոր առաջարկութիւնն ինչպէս որ ինքնին յայտնի է խաղաղասէր անձանց , ՚ի հարկէ լատինաց խոռվասէր որտին ծանր պիտի գար և եղաւ այնպէս . վասն զի եթէ գործը այս եղանակաւ սկսուէր , անոնց շար և յափշուակիչ խորհուրդը իրենց պատին մէջ պիտի խղդուէր մնար . և իրենց նպատակին հասնելու համար միջոցը պիտի պակսէր և չպիտի կը սանցին իրենց ըրած խորհուրդը գլուխ հանել ՚ի վեսա երկուց ազգացս , մաւնաւանդ Հայոց ազգին : Երբ այս խաղաղասէր առաջարկութին լսեցին , զօր արդէն Յօւնաց Ամեն . Ա. Պատրիարքը ըն ամենայն սիրով ընդունած էր , ՚ի խոր խոցեալ խոռվեցան լատինք , և փոքր մի յառաջ իրենց այն քաղցը և հեղ խօսուածքը եղայրսիլութիւնները զօր առատօրէն կը խստանացին մեզ , առ ՚ի պաշարել և խարել և ու

բով զմեզ զբաղեցուցած իսկ էին քառնի մը որ առ ՚ի օրինաւոր պատրաստել իւրեանց մեքենայութիւնները՝ ՚ի դառնութիւն փոխեցին , որով և բոլոր ջանքերն և աշխատութիւնները անօգուտ եղան :

Հայք և Հյունք մինչդեռ այս սրբամաշ եղելութեանց վրայ կը խորհինք և ելք մը գտնալու համար ուրիշ եղանակ կը մտածէինք , մէկ մը ալ լսեցինք որ լատինք իրենց գերեզմանատան պատը սկսեր են շնել կայծակի արագութեամբ , և երբ հարցուցինք թէ այդ բնչընթացք է , որ բունած էք , ոչ ապաքէն դարձեալ խորհրդակցէինք պիտի , և որ և իցէ կերպիւ համաձայնութեամբ պիտի սկսէինք . այժմ գուք բոլոր ձեր ըսածները մոռնալով անոր հակառակը ՚ի գործ կը դնէք . և եթէ մոքերնիդք բարի է , ինչնու ացդպէս տուանձին , ինչնու առանց լուր տալու մեզի , և ինչնու այնքան կայծակի արագութիւն կը գործէք . միթէ անկարելի բանն մի էր անոր միջոցը գտնալ , կամ համազել և կամ համազուիլ : ”

Պատասխան տուին անսնիք մեզի ըսելով թէ , “ Վյամենք ալ այնպէս ըլլալը գիտեմք , և կ'ուզեինք ալ , որ և իցէ կերպիւ վերջ մը տալ , այլ երբ նայեցանք որ գուք պատ շնելու միտք չունիք , եթէ ձեզ մնայ , շատ պիտի ուշանայ , մեզի ալ մեր Տէրութիւններէն սաստիկ հրամաններ կան որ առանց ժամանակ անցընելու գերեղմանատան պատերը լացընեմբ , վասն որոյ ձեզ լուր տալու հարկ չմնաց : —

“ Վենք այս բանիս վրայօք ինչ օր կարելի էր ընել ըրինք Խղբէթ փաշացի օրով . և անձամբ ինքը եկաւ նոյն տեղը , ինչպէս յառաջադրոյն ալ պատմուեցաւ , և անոնց երեսին ըստ , և իրաւոնիք չունիք Հայոց գե-

քեզմանատան վրայ դուռ ձգելու, քանի որ արեւմտեան կողմը թագաւորական ճանապարհ կայ : Ես Դուռտուս Ութասարրթիք ըլլալովս այդ տեղ Հայոց իրաւանց վրայ ձեր դուռը չեմ ճանաշերո : Բայց ալ եր լսողը . Ութասարրթիքն ըսած խօսքերը բոլորովին ապարդիւն մնացին, վասն զի արգելուլ չի արողացաւ . ահա այն է, որ մնաց . քանիցս անդամ՞ : Դուռն ճանձրացուցինք, այլ անօգուտ, և չեմք դիմեր թէ ինչու համար մեր գործերը այսպէս երեսի վրայ կը մնան :

“ Ահա Վսեմ . Տեարք, պատմեցի ըստ ձեր Բարձր հրամանի, ըստ Ա. Պատրիարքը և ահա ականատես եղաք Օսմաննեան բարեխնամ Տերութեան այսքան դարերէ ՚ի վեր հաւատարիմ հպատակին այս Թրանջիսկեան միաբանութեան երեսէն քաշած անտանելի նեղութիւնները, հաղածանքները և ըրած կորուստները զրոյ Թրանջիսկեանը յափշտակած են և գեռ այսօր նոր իրաւունքներ յափշտակելու ձեռք կը դարնեն : Աւրեմն Տեարք իմ, կը խնդրեմ իմ կողմէս իմ Անձազօր և խնամաւատ թագաւորիս հաւատարիմ հպատակ Հայոց ազգին իրաւանց կորսուեան կոկիծները ՚Ն. Վեհափառութեան իմացուցէք, և Նորին հայրական քաղցր ակնարկութիւնները և գթութիւնները իւր սիրելի հպատակին իրաւանց վրայ դարձընելու միջնորդեցէք . և եթէ Դուք Վսեմ, Տեարք, այսքան մանրախոյզ քննութեամբ յայտնի տեսնելէն և իմանալէն յետոյ դարձեալ զանց պիտի ընէք, ինչու ըրին Ձեր նախորդները, կը իմագրեմ այս օրէն ասացէք ում դիմեմ, զնկ աղաւեմ, զնկ միջնորդ գտնամ, ասացէք ինձ կ'աղաւեմ, զի այս ցաւերը զրոյ Թրանջիսկեանք հետզհետէ հասուցած են մեզ

և միշտ կը հասցընեն, ալ անտանելի մեզի և անհամբերելի: Կացէք Տեարք իմ, եթէ Բարեխնամ Տէրութիւնը չուղէր մեր աղաւանքները լսել, մեր կորուստները տեսնել, որ երբէք չեմ յուսար, տացէք մեզի . վասն զի մենք հոս այս մարդկանց ձեռքը գերի և խաղալիքնեմք եղած . ալ չպիտի համբերեմ, և ամենայն զօրութեամբ պիտի այս բողոքեմ և չպիտի դադարիմ ՚ի բողոքելոյ :

“ Անձազօր Օսմաննեան Տերութեան Վեհափառ թագաւորին մերոյ, ըստ Վսեմ . Վալի փաշայն, երբէք չներեր իւր հպատակասէր բընութիւնը, որ իւր իշխանութեան տակ գանուած հպատակաց արգարիաւաւունքը կորսուի . ասոր յայտնի ապացոյց կրնայ սեպուիլ ձեր սուրբ Յակովը տաճարին խնդիրը որ այսօր աչքերնուգ գիմացնէ, որուն համար ահա յատուկ հրամաններ եւ քննիչ խրկեց ՚ի Պօլսոյ Նորին Վեհափառութիւնն, և զմել ՚ի Դամակոսէ կոչեց :

“ Այս, եղած է ժամանակ որ Տերութեան օրինաւոր չեն կրցած հասկոցնել և վեր ՚ի վերց հասկուած բաներուն վրայօք ալ յանկարծ վաճառահատութիւն չլրնար ըլլալ և ըլլոյ ալ օրինաւոր չեցոր վասն կ'երկարի երբեմն միջոցը, բայց ոչ երբէք կը մոռցուի, այլ երբ օրինաւոր կերպիւ գործին իսկութիւնը կը յայտնուի և կզուտի, իսկոյն արդար վճռահատութիւնն ալ վրայ կը հասնի . ասոր պէս ալ նայեցէք այս գործերուն մէջ որքան կնճռալի կէտեր կան, որ մենք երբէք չէնք գիտեր, և չեր ալ յուսացուեր, որ այս աստիճան հակառակութիւններ եղած ըլլան, անյուսալիքներ, անլսելի խարդախութիւններ գուրս ելաւ լցուեցաւ, և որ դուք

անձամբ պատմեցիք, և է որ գործը ինքնին յայտնեց . ՚ի հարկէ այս մեր տեսածները, քննածները և լածները բոլոր պիտի տեղեկագրեմք ի . ՚Դժան և պիտի ծանուցանեմք մի ըստ միտմէ, և ի . ՚Դուռն ալ ըստ այնմ իը անօրինէ, ուրեմն դուք երբէք կասկած մը ընէք . արդարապէս գրել, և բանին չիշտ էութիւնը հասկըցընելմեր պարտաւորութիւնն է, ուրեմն դուք մի ամիս կացէք, ո ըսելով վերջացուցին թէ Վահմ . Վալի փաշայն և թէ Վահմ . Ոյնիք էֆէնտին իրենց խօսքերը :

՚Դարձեալ Վահմ . Վալի փաշայն յաւելցուց ասել թէ ՚Փամբրիք տօսթումուզ, ձեր ըսածներէն շատ բաներ հասկցուեցաւ . և շատ մը մութմացած պարագայներ լուսաւորուեցան, բայց ինձ այնպէս կը թուի, որ նոյն դռները այդպէս անիրաւոբար ձգուելուն գլուխոր պատճառ մը պիտի ըլլայ, վասն զի ինչպէս որ թէ իրենց քաշած յատակադիծ (խարդայն) թէ ձեր քաշածը յայտնի կը ցուցընեն որ ՚ատինաց գերեզմանատան արեւմտեան կողմը օրինաւոր ճամբայ կայ և իրենց աւելի դիւրին է անկէց դուռը բանալ, այդ մարդիկները այդքան իրաւունք չանցողներէն չեն, ՚ի հարկէ գիտեն . բայց ինչպէս կարելի է որ իրենք ըստ իրենց քմաց այլոց իրաւանց վրայ դուռ ձգեն, բոլոր աշխարհի և Տէրութեանց հակառակ է այդ և կատարեալ բռնութիւն . ուրեմն եթէ այս բանիս յատուկ պատճառ մի կայ թէ ձեր և թէ ՚ատինաց կողմանէ, այն ալ եթէ իմացընէք, աւելի լաւ կըլլայ, գուցէ գործին ալ աւելի դիւրութիւն կընծայէ, ըսէք ուրեմն,

՚Քանի որ ՚Զեր Վահմութիւնը կը խօսքարկէ և կը կամի իմանալ բռն իսկ արմատն այն սրտամաշ գործոյն,

ուրեմն պարտաւոր եմ ՚Զեր ՚Վեհութեանը պատմել նոյն իսկ արմատական պատճառը, ըստ Ա. Պատրիարքը և սկսաւ այսպէս պատմել միըստմիտլէ:

՚Վահմ գերեզմանատան գոներուն ինդիրը ուրիշ խնդիրէ ծագած է որ շատ հետաքրքրական է, և նոյն դռներուն ձգուելուն մէջ եղած գաղտնի նպատակը յայտնել չեն ուզեր | աւտինք, վասն զի իրենց ըրած յայտնի անիրաւութեն իրենք վկայած կ'ըլլան, բայց ես կը յայտնեմ Վահմափայլ Տէարք : Ինչպէս յատակադին մէջ կ'երեւի, Ո. Ոյն լերան վրայ | աւտինաց գերեզմանատան կից պարտէղմի ունիմք մեզ Հայոց սեփհական . ՚աւտինք իրենց միոքը դրած են ՚ի վաղուց նոյն պարտէղէն բաւական մեծութեամբ մաս մը, այսինքն՝ 750 կան գուն գետին իրենց կողմը կորզել որ և իցէ եղանակաւ, ինչպէս ըրած են իրենց գերեզմանատան մէկ՝ մոսը զոր վերը յիշեցմնք, որով իրենց գերեզմանատառնն աւելի ընդարձակել . և այս խնդիրը ժամանակ ժամանակ մեզ առաջարկեցին թէ և զանազան եղանակաւ, այսինքն երբեմն իբր շնորհէ և ՚ի սէր եղբայրութեան խնդրելով, երբեմն ուրիշ տեղի հետ փոխել ուզելով, երբեմն սպառնալիքներով ահ և սարսափ ձգելով իրենց պաշտպան եղող Տէրութեանց անունով երբեմն միշտ հաշու ակամք նայելու պայմանաւ, և երբեմն մէծ մէծ խոստմանքներ ընելով . լաւ ևս է ասել խարել կամելով զմեզ իբրև տհաս մանուկ, ինչպէս Կեսարից մէջ այն ՚արէայն, որ իւր խորամանկ խարեբայ բնութեամբն յափշտակել կը ջանար ուրղուն ձեռքէն պատուական ոսկին, Շանք կը կարծեն թէ Հայոց միաբանութիւնը Ոյն լերան վրայ ունեցած իւր սեփհական տեղին յարդը և պա-

տիւը չդիտէր : Այլ երբ տեսան որ  
անոր յարդը իրենց կարծածէն աւե-  
լի լաւ գիտէ , և գիտնալով | ատինաց  
այդպէս խարդախ խնդիրները մեր-  
ժեր էր և պիտի մերժէ յաւիտեան ,  
քսնի որ չեն ճշմարփոտ , չեն արդար և  
չեն անխարդախ . Երբ այս եղանակնե-  
րով Հայոց միաբանութիւն չկարողացան  
խարել , ելան այս գերեզմանատան  
պատերը շինելու խնդիրը հնարինցն .  
այսինքն՝ յանիրաւ տեղը Հայոց գե-  
րեզմանատան վրայ երկու դուռը մէ-  
կէն ձգել . և մենք որբան խորհեցանք  
և խօսեցանք , բողոքեցինք , իրաւունք  
պահանջնեցինք , և այն . ամենն ալ 'ի  
գերեւ ելաւ , քանզի մտիկ ընող ըր-  
կար , քանզի Տէրութեան պաշտօնեաւ  
ներն անգամ բարեխնամ (Ճագաւո-  
րիս հրամանները կատարելու գժուա-  
րութիւններ կը հանէին . 'ի հարկէ  
այն անվայել էնթրիքներու երկիւղէն  
խեղչ Հայոց ազգին արդար սեպհաւ  
կանութեան իրաւունքը ոտքի տակ  
պիտի երթար . պիտի բռնաբարուէր  
բողոքը . լալը . ողբալը . աղազանքը ,  
պաղատանքը անլսելի պիտի ըլլար ,  
ինչպէս որ եղաւ : | ատինք յաղթու-  
թեան գոները հաստատեցին իրեւ  
Փարիզի յաղթութեան կամարը , Փա-  
րիզի շնորհիւ , սկսան յաղթութեան  
դռներէն մօնել ելեւ 'ի նախատինս  
Հայոց միաբանութեան , կարծեցին  
որ եղաւ կառարեցաւ . բայց զրկեալ  
Հայոց միաբանութիւնն կ'աղաղակէր  
և ասէր , զրկեալ եմ յարդար և սեպ-  
հական իրաւանց շնորհիւ . . . . .  
կ'աղաղակէմ առ | ատինս և շկամեր  
լսել և իմ իրաւունքս ետ դարձնել  
կ'աղաղակէմ առ . Քաղաքապէտն , նա-  
եւս ոչ կարէ զիմ իրաւունս կորզել  
բռնաւորին ձեռքէն . կ'աղաղակէմ  
առ | Դուռն , և նա ոչ գիտեմ  
ինչու իմ խնդիրներուս կարեւարու-

թիւն չտար և չպատամաններ . թէ  
և այս աղազանաց ձայնը չէր լսուեր ,  
բայց զրկողին ականջին սուր ազդե-  
ցութիւն կ'ընէր . իրեն խիզճը ներ-  
սէն զինքը կըտագնապէր : | յս Խրո-  
ճահարութենէն ալ աղատելու հա-  
մար և Հայոց միաբանութեան բե-  
րանը գուցելու համար որ չաղաղա-  
կէ , միջոց մը գտնելը ըուշացուցին  
Խրանչխոկեանք , և յաջողեցան ալ և  
գտան իրենց կամակատար Կաթոլիկ  
Գօնսոլողին մէկը , որ նախ իւր կող-  
մանէ և յետոյ նոյն միաբանութեան  
կողմանէ շատ թախանձանք կը խնդ-  
րէր նոյն վերսիշեալ պարտիզին կտո-  
րըն և կ'ըսէր , թէ « Այժէ կը հաճիք  
տալ նոյն կտօրն , ես Խրանչխոկեան-  
ները կրնամ համոզել որ նոյն ձեր ի-  
րաւանց վրայ բացուած երկու դրո-  
ներն ալ բոլորովին ձեր ուղածին պէս  
անյացա կերպիւ գոյոււին : Երբ այս  
խնդրոյն բացասական պատասխան  
տրուեցաւ , ուրիշ անգամ մի դար-  
ձեալ գալով ըստ . « Այժէ կամիք նոյն  
կտօրն տալ , գոները գոյուելէն զատ՝  
նոյն պարտիզի կտօրի արժողութիւնն  
կամ անոր փոխարէն գետին մը կու-  
տանք : » - Բօի , « Պ . Հիւպատոս , նոյն  
տեղին համար զրամ չեմ ընդունիր .  
այլ տեղի հետ կրնամ փոխել երբ ու-  
ղած տեղը ըլլայ , այնպէս որ գոնէ  
կորմնցուցած տեղիս ցաւը ինձ մոռ-  
ցընելու չափ արժողութիւն ունենայ .  
- Բօաւ՝ շատ լսւ , լսէ , որ տեղ կու-  
զես : - Բօի . Դեթսեմանի ձորին մէջ  
| . | Ստորածածնոյ գերեզմանին մօտ  
| ատինաց պարտէզլ , ուր կան ութ  
հատ հնագոյն ձիթենւոյ ծառք Պա-  
նի ծառք կոչուած , Քրիստոսի աղօթա-  
տեղւոյն մօտ : Երբ այս լսեց Պ . Հիւ-  
պատոսը , ժպտեցաւ և ըստաւ . « Ո՛-  
թէ կարելի՞ բան է այդ . և ինչպէս  
կրնայ լինիլ : »

“ Ալւրեմն ասացի ես ալ , ի՞նչպէս  
կընայ լինիլ Ա . Վիօն լերան վրայ  
750 կանգուն գետին ոչ ինչ տեղի  
մը հետ փոխել . Չեր մեծութիւնը  
միթէ ջղդիտեր , որ մեր տեղը ոչ թէ  
միայն մեզ համար , այլ ամենայն աղ  
գաց համար եւս Ա . Վիօն լեռան ա-  
նունով պանծալի և տօնելի անունն մի  
է (մուգատտէս) , ձեր տալիք տեղին  
աւելի յարգի և աւելի մեծ , ուրեմն  
մորելինիդ ինչ է , ոչ ապաքէն դուք  
ըսկիք թէ ուղեցէք | ատինաց ձեռքը  
գտնուած տեղերէն ուր տեղ որ կ'ու-  
զէք , և ես ըստ այնմ ասացի . ահա ,  
եթէ չէք կամիր , շատ լաւ . մեր գե-  
տինը մեզ պէտքէ : ո Այս բանին վը-  
րայ շատ մը խօսակցութենէ եսքը  
վերջապէս այն օրն ալ գնաց : —

Դարձեալ ուրիշ օր մի ալ գալով  
նոյն հիւպատոսն , կ'աղաշէք և կ'ըսէք .  
“ Ալղջակի ինձ համար կը խնդրէմ , ինձ  
պառկելու տեղ ընկելու համար ինձ  
շնորհք ըրէք , ես իմ գերեզմանս պի-  
տի շինեմ նոյն տեղը իմ՝ անձիս հա-  
մար , և այն : —

Կ'ացի , Պ . Հիւպատոս , դուք  
ինչու համար այսպէս չըր և ցամոք  
տեղէք պիտի պառկիք . գնացէք ձեր  
այն զուարձալիք , ջրով , խոտով և ծո-  
ռով և ծաղկօք լի՛ հւրոսայն հօն պառ-  
կեցէք . քանի որ այնպէս հայրենիք ու-  
նիք կարեւորութիւն չկայ ձեզ գալ  
ինձ նոյն կտորին համար այնքան աղո-  
չելու և ինձ չափելու : — Ես օրը կ'ե-  
րեւար որ իւր լեզուին տակը բան մը  
կար , կ'ուղէք դուրս հանել , բայց  
հանելու դժուարութիւն կը կրէք ,  
խօսքը շատ մը ասդին անդին պտըո-  
ցընելէ ետքը ձեռքս բռնելով վեր-  
ջապէս համարձակեցաւ սոյն հետա-  
գայ խօսքերը արտասհանել բերնէն ,  
այսինքն՝ թէ կ'աղաշէմ դուք այս կը-  
տորը | ատինաց շնորհեցէք , և ես նոյն

շնորհքին տակը չեմ մնար , և զձեզ  
գոհ ընելու չափ կ'աշխատիմ , և այնու-  
թի , Պ . Հիւպատոս , այդպէս ան-  
շան խօսքերէ և մութ ինդիլիներէ  
բան չեմ հասկընար . կը խնդրեմ ձեր  
խօսքերը բացայաց խօսիք՝ թէ ի՞նչ  
ըսելէ եթէ նոյն գետինը ձեզ տրո-  
ուի , զիս գոհ ընելու չափ Չեր աշ-  
խատիլու : —

“ Այս ըսել կ'ուզեմ ըստու , դուք  
շնորհեցէք նոյն գետինը | ատինաց ,  
և ես խօսք կուտամ ուղղակի ծանու-  
ցանել կայսեր Չեր ըրած առատա-  
ձեռնութիւնը . և նոյն տեղին յար-  
գը եւս կը ծանուցանեմ Տէրութես ,  
և ի հարկէ անոր փոխարէն . . . . .  
ձեզ համար կայսրը օրինաւոր բան մը  
կը զրկէ , ո և այլն :

“ Հիմա իմացայ Չեր աշխատու-  
թիւնն , մեծապէս շնորհակալ եմ Պ .  
Հիւպատոս ըսի , այդ աշխատութիլը  
ինձ համար մի կրէք . այդ թող մնայ .  
կեցիք Չեղ ըսելիք ունիմ : Այդ խօս-  
քը ձեր բերնէն հանելու համար կը-  
րած նեղութիւննիդ ինձ համար բա-  
ւական է . դուք Պ . Հիւպատոս , այդ  
խօսքը ձեր բերնէն հանելու չէիք այդ  
խօսքը ձեզմէ լրած , դուցէ կարելի էր ,  
թէ և չէր , այլ քանի որ այդ խօսքը  
ձեր բերնէն ելաւ , ահա այժմ ամե-  
նանկարելի եղաւ այդ գետինը | ա-  
տինաց որ և իցէ կերպիւ տալը , վասն  
զի ձեր այդ խօսքը Պ . Հիւպատոս ,  
ինձ համար անտանելի է . դուք ի՞նչ  
կարծեցիք Հայոց Պատրիարքը , այս-  
պէս մնատի բաներու խօսքուելով իւր  
Ծգին սեպհականութիւնն (որու վրայ  
իր անձը դրած է) օտարաց կը շնորհէ  
կարծեցիք ի՞նախատինս իւր անուանը  
աղդաց յազդս : Քամ լիցի , Հայոց  
Պատրիարքը այդ ստորութիւնն ը-  
կընար ընդունիլ . այդպէս մնատի բա-  
ներով չկնար փոխանակել իւր օդին-

լ Վզգին օրինաւոր և նուեկրական իւրաւունքը, ասան ինձ, քո կայսերդ ինձ զրկելիք պատուանշանին արժողութիւնն քանի հարիւր ուկիի արժու զութիւն կրնայ ունենալ. թող ըլլայ հինգ հարիւր լիրայի, առաւել եւս հազար լիրայի, ասկէց աւելի կարելի է: Այսաւ Պ. Հիւպատոսն, և ոչ երեք հարիւր լիրայի, գուցէ ըլլայ երկու հարիւր կամ երկու հարիւր յի սուն լիրայի, բայց և այնպէս գիտէք ո՞ արժողութեան վրայ չէ թագաւորաց տուած պարգեւը, միայն անունը բաւական է, և գինն անդին. և ձեզ համար մեծ պատիւ կը սեպուի: —

“ Ինձ համար մեծ պատիւ և անդին գանձ և բարութիւն՝ իմ սիրելի Վզգիս իմ ունեցած պարտաւորութիւնս ճանշալս է. իմ Վզգային սեպ հականութեանց և իրաւանց վրայ օրինաւորապէս և հաւատարմաբար, ըստ իմ պարտաւորութեանս հսկելս է, և նոյն պարտաւորութիւնս կատարելէս կը ծագի այնպիսի մեծ պատիւ մը, որ ասկէց աւելի մեծ և անդին գանձ և պատիւ ինձ համար չլինար գանուիլ ՚ի ներքոյ արեգական: Այս գուը Պ. Հիւպատոս կը զարմանամ թէ ինչպէս համարձակեցաք առաջարկել այնպէս վատ և ամենավատ խնդիր մը. և յումմէ ստիպուեցաք, և ոլյորդորեց զձեղ այդպէս ցուրտ, անիլ առաջարկութիւն մը ընել գիմացնուդ մարդուն բնաւորութեան վրայ առանց առեղեկութիւն ունենալու: Դիցուք թէ Ձեր թագաւորին ինձ զրկելիք պատուանշանն իմքիւմը յառաջ ըսածիս չափ մեծ արժողութիւնն ունենայ, և ձեր ըսածին չափ ալ մեծ պատիւ բերած ըլլայ իր հետը, ես ինչըն պիտի սափուիմ այն արժողութեան և այն պատուսն իսաւուելու, միթէ իմ սիրելի Վզգս և

իմ բարեկնամ Տէրութիւնս ՚ի պատիւ իմ Վզգիս պական թողուցեր է. և զրկեր է զիս այն պատիւներէն, ոչ ապաքէն կուրծքիս վրայ լեցուած է արդէն. եթէ երբէք չունենամալին չու համար այդ անարդ անունն վրաս առնեմ իմ ազգային սեպհականութիւնս իմ սիրելի Վզգիս արեամբը գնուած գետինը այլոց շնորհելով իբրեւ անհաւատարիմ և իբրեւ մատնիչ . քաջ գիտցէք Պ. Հիւպատոս, մարդ աշխարհիս վրայ միայն անուան համար կ'ապրի. և այն բարի անուան, վասն զի ըստ գրայն՝ “ Լաւ է անուն բարի, քան զգանձս բազում: ”

“ Կը այս խօսակցութիւներէն յառաջացած սրտիս կոկիծը չկընալով զավել գլխիս վեղարէն գնտասեղ մը (թօփլու) քաշելով ըսի իրեն, նայեցէք Պ. Հիւպատոս, այս գնտասեղին հատը մէկ փարայ կամ երկու հատը երեք փարայ կը ծախուի, բայց երբ իմ Վզգը գըս կամ իմ թագաւորս իմ պաշտօնիս մէջ հաւատարիմ գտնուելուս համար մէկ հատիկ այսպէս գնտասեղ մը ղրկեն ինձ գլխուս վեղարին գործածելու համար, ձեր Վեծութեծեռոք ձեր թագաւորէն գալիք հազար լիրայի արժողութեամբ պատուանշանէն և իւր հետը բերելիք պատիւէն աւելի մեծ պատիւ կը համարիմ ինձ. իմացաք հիմա Պ. Հիւպատոս Հայոց Պատրիարքին տմարդի բնաւորութիւնն: Վհա երբեմն այսպէս օգտակար կարծուած առաջարկութիւններ որ առաջարկողին աչքին մեծ կ'երեւայ, այլ երբ առաջարկողը առանց որոշելու ընդունովին բնաւորութիւնն առաջարկէ, այսպէս այն պատուական շնորհքը իւր յարգը կը կորսունցընէ: Այս չեմ կրնար իմ Վզգիս և Տէրութեանս դէմ անհաւատարիմ գտնուիլ մնութի և ան-

ցաւոր պատուանշանի մը համար . կը խնդրեմ Պ . Հիւպատոս ոչ այս առաջարկութիւնն և ոչ նոյն գետնին իրն գիրը կրկնէք ինձ ուրիշ անդամ , եթէ կ'ուղէք մեր բարեկամութեան կապը չխղել , և կը խնդրեմ ներազամիու եղիք իմ պարտաւորութենէս ասիակեալ ըստծ խօսքերուս ծանրութեանը զորս համարէ թէ յակամայից ստիպուեցայ արտասանելու , զոր դուք ալ գիտէք :


“Պ . Հիւպատոսին այս բանին վրայօք խօսածները իմ անձիս գովութեան վերաբերելուն համար զանց կ'ընեմ ”Ձեր Վ սեմութեան պատմելու . այսքանը իմացէք որ բոլոր ըստծներուս իրաւունք տալէն ետքը , ամենայն սիրով բաժնուեցաւ մեղմէ :

“Ահա Վ սեմ . Տեաք , կատարելապէս իմացաք Վիօնի գերեզմանաւտան խնդրոյն ծագման բուն աղքիւրը , և տեսաք որ Օսմանեան բարեխնամ կայսեր հաւատարիմ հպատակ Հայոց ազգը ո՞ր աստիճանն նեղութեանց եւ տառապանաց տակ ընկեծեալ իբրեւ գերի կեանիք կը վարէ , այսպէս օտար ժողովրդոց և օտար ազգեցութեան ձեռքէն , որք որ և իցէ կերպիւ բոլոր ճիգերնին կը թափեն մեր և մեղապիսի Տէրութեան հարազատ հպատակաց ձեռքը գըտնուածքները յափշտակելու և իւրացնելու համար , մինչեւ անդամ Հիւպատոսաց և Դիսպանաց ձեռք ինչ գաղտնի դործեր կը դառնայ , զորս միայն Վոտուած գիտէ :

“Ահա ինձ ինչպէս որ պատահեցաւ Ձեր Վ սեմութեան առջեւ մի ըստ միուշէ պատմեցի . և Դուք լսեցիք Տէաքը իմ , այս դործիս մէջ գարձած մեքենայութիւնները , դուք ինքնին գատեցէք եւ մեր իրաւունքը մեղ

գարձուցէք . Ըէ ֆքեամլը Վ փէնտիմլ Փատիշահմբղզն աղիղ պաշ իւշւն օլոււն , վէ ոէլամ , ”

Եւ այսպէս վերջացաւ Սուրբ Տէղեաց խնդրը եւ տեղեկադրեցաւ եւս Ի . Դուռսն . դեռ կ'ըսպասեմք նոյն խնդրոց համար ելելիք արդար վճիռներուն որ մենք ալ մեր կորուսած սեպհական իրաւանցս Տէր ըլլամք . ՚ի հարկէ այն ալ մօտ է Վայէի շահանէտէ :



## ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

### Ա. Ռ. Պ. Զ Ո Ւ Թ Ե Ս. Ն

(Հարաւնակութիւն , տես թիւ 6 :)

”Նոքա , որք միշտ ընթեռնուն և գըրեն , բազում անդամ վլտանան աշացաւութեամք կամ նուազութեամք աջայ . մանաւանդ որք ընթեռնուն կամ գրեն յերեկոյեան կամ ՚ի գիշերի ՚ի լոյս ճրագի , որ գրեթէ վլտանկորէ աջաց յոյժ , յորմէ զգուշանալ պարտէ , որչափ և հնարէ : Բայց եթէ որ ոչ կորէ թողուլ զայս սովորութիւն , բարեօք է նմա հովանաւորել զաշնն ՚ի բոցց ճրագին ՚ի ժամու ընթերցման կամ գրելոյ : Եւ նուազացաց յոյժ օգտէ ցուրտ ջուրն յաւուրին երկիցս կամ երիցս լուանալով զայն , ընդ որ և եթէ խառնեցի սպիտակ օղի իբրեւ ղքան վիթ ՚ի մի բաժակ ջուր , օգտէ յոյժ :

”Ձեք ինչ վատթարագոյն ախտ քան որ պատճառի յապականեալ հիւթոց , որ է արդիւնք խորախորհուրդ մուածողութեան , և վլտանի քան զոմե-